ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/124

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.04.2022թ. թիվ 26/26-1/6413-2022 գրությամբ «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 06.04.2022թ. թիվ Ե/40/750-22 գրության հիման վրա, 13.04.2022թ. թիվ 26/26-1/6413-2022 գրությամբ նախաձեռնել է «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22 ծածկագրով գնանշման հարցման հրավերի արդյունքում 30.03.2022 թ-ին կայացված Թիվ 6 արձանագրությունը, «Սենարալ» ՍՊԸ-ն /այսուհետ Մասնակից/ պահանջել է ներկայացնել մանրամասն պարզաբանում թե ինչպիսի անհամապատասխանություններ են արձանագրվել, որպեսզի կատարվի անհրաժեշտ շտկումը՝ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 31.03.2022թ-ի գնահատող հանձնաժողովին ուղղարկված գրությամբ՝ ԵԼ 31/03-1/22:

Խնդրում եմ 13.04.2022թ-ին նախաձեռնած ՍՑ-ԼՕ-2022/187 ընթացակարգը մերժել:»:

«ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/124 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.04.2022թ. թիվ Ե/40/750-22 գրությամբ, հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում, համաձայն « գնումների հետ կապված բողոք քննող անձի 2022 թվականի հունվարի 12-ին կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/02 որոշման, գնահատող հանձնաժողովի կողմից կասեցվել է վերը նշված ընթացակարգը և կիրառվել է ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 67-րդ կետի պահանջները (գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը):

Առաջարկված համարժեք առանցքակալների կիրառման և ընդունման վերաբերյալ հարցումներ են ուղարկվել չորս արտադրող գործարանների (АО «Украинские

энергетические машины», ООО «Сигма.РУ», АО «Сумский завод «Насосэнергомаш», АО «ЦКБМ»):

Ուղարկված հարցումներին պատասխանել է միայն АО «ЦКБМ»-ը, նշելով որ մասնակցի կողմից թիվ 18 և 19 չափաբաժինների համար առաջարկված 126А (ГОСТ 520-2011) և 32216 (ГОСТ 520-2011) առանցքակալներ հնարավոր է կիրառել միայն սարքավորումը նշված առանցքակալներով ամբողջական բեռնվածության տակ փորձարկումներ կատարելուց հետո, առանց որի նախագծող և արտադրող ընկերությունը չի կարող որևիցե եզրակացություն տալ: Նշված փորձարկումները և ռաումնասիրությունները հնարավոր չէ կատարել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում:

Գնահատող հանձնաժողովի կողմից կրկին վերանայվել են թիվ 1 - 6, 9, 11, 12, 15, 20 և 21 չափաբաժինների համար առաջարկված առանցքակալների տեխնիկական բնութագրերը և արձանագրվել է, որ առաջարկված թիվ 1-5, 9,20 և 21 չաւիաբաժիններում ներառված առանցքակալները համապատասխանում են և բավարարում են հրավերի պահանջներին:

Մնացած թիվ 6, 11, 12, 15, 18 և 19 չափաբաժինների մասով առաջարկվող առանցքակալները գնահատող հանձնաժողովի կողմից դիտարկվել են հրավերի պահանջներին անհամապատասխան, քանի որ ունեն կոնստրուկտիվ տարբերություններ, ինչը նշանակում է, որ դրանց կիրառումը կբերի նախագծող և արտադրող կազմակերպության կողմից հաշվարկված և մշակված նախագծից շեղում, որը իր հերթին բացասական ազդեցություն կունենա սարքավորումների տեխնիկական վիճակի վրա, կբերի

Էներգաբլոկի հզորության անկման և կստեղծի վթարային իրավիճակ, ինչը ենթադրում է մեծ ֆինանսական կորուստներ և ծախսեր:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Որոշում) 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցել է «Սենտրալ» ՍՊԸ-ին առկա թերության վերաբերյալ:

«Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում թիվ 6,11,12,15,18 և 19 չափաբաժինների մասով շտկում չի կատարվել այլ համակարգող քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է թիվ ԵԼ 31/03-1/22 առ 31.03.2022 թվականի

գրությունը՝ նշված չափաբաժինների չշտկման վերաբերյալ, որը համակարգող քարտուղարի կողմից ներկայացվել է գնահատող հանձնաժողովին:

Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ ուղարկված գրությունը թիվ 6, 11, 12, 15, 18 և 19 չափաբաժինների գնման առարկաների տեխնիկական բնութագրերի մասով ոչ մի շտկում չի պարունակում, ուստի նշված չափաբաժինների գնման առարկաների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության և ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն Որոշման 45-րդ կետի պահանջներով՝ Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները:»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/124 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/124 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/124 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ թիվ 6, 11, 12, 15, 18 և 19 չափաբաժինների մասով առաջարկվող առանցքակալները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ ունեն կոնստրուկտիվ տարբերություններ, ինչը նշանակում էր, որ դրանց կիրառումը կբերի նախագծող և արտադրող կազմակերպության կողմից հաշվարկված և մշակված նախագծից շեղում, որը իր հերթին բացասական ազդեցություն կունենա սարքավորումների տեխնիկական վիճակի վրա, կբերի էներգաբլոկի հզորության անկման և կստեղծի վթարային իրավիճակ, ինչը ենթադրում է մեծ ֆինանսական կորուստներ և ծախսեր:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 31.03.2022թ. թիվ ԵԼ 31/03-1/22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր կողմից կայացված 30.03.2022թ-ի թիվ 6 արձանագրությամբ նշված է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի համապատասխան ստորաբաժանման մասնագետների մասնագիտական գիտելիքներն ու փորձը հնարավորություն չեն տվել ուսումնասիրել և ստուգել Ընկերության կողմից «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված առանցքակալների տեխնիկական բնութագրերը և Ընկերությանը տրամադրվել է մեկ աշխատաքային օր, որպեսզի իրականացվի տեխնիկական բնութագրերի շտկում առանց հստակեցնելու, վերացական կերպով նշելուվ անհամապատասխան է հրավերի պահանջներին, ինչը հակասում է Կառավարության որոշմանը …

Նման արձանագրությունից դժվար է կռահել թե 6, 12, 15, 18 և 19 չափաբաժիններում ներկայացված առանցքակալների տեխնիկական բնութագրերում ինչն է անհրաժեշտ փոփոխվի կամ շտկվի …

Միևնույն ժամանակ ոչ բավարար գիտելիքներով մասնագետների կողմից կայացված վերացական որոշումները անընդունելի են …

Հարգելի Մ. Մանավջյան տրամադրեք մասնագիտորեն՝ հրավորով պահանջվող և առաջարկվող տեխնիկական բնութագրերով, առանցքակալների անհամապատասխանությունները՝ տարբերությունները, որպեսզի գործարանի մասնագետները կարողանան բավարարել պահանջները …»:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2022թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել շտկված տեխնիկական բնութագրերը և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.04.2022թ. թիվ 26/26-1/6413-2022 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 06.04.2022թ. թիվ Ε/40/750-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: **Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:**

<u>Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի

ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: Սույն պարբերության կիրառման դեպքում կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը պետք է առնվազն պարունակի տվյալներ մասնակցի (մասնակիցների) անվանման, հարկ վճարողի հաշվառման համարի և հայտը ներկայացվելու ամիս ամսաթվի և տարեթվի մասին:Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ թիվ 6, 11, 12, 15, 18 և 19 չափաբաժինների մասով առաջարկվող առանցքակալները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ ունեն կոնստրուկտիվ տարբերություններ, ինչը նշանակում էր, որ դրանց կիրառումը կբերի նախագծող և

արտադրող կազմակերպության կողմից հաշվարկված և մշակված նախագծից շեղում, որը իր հերթին բացասական ազդեցություն կունենա սարքավորումների տեխնիկական վիճակի վրա, կբերի էներգաբլոկի հզորության անկման և կստեղծի վթարային իրավիճակ, ինչը ենթադրում է մեծ ֆինանսական կորուստներ և ծախսեր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

«ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 31.03.2022թ. թիվ ԵԼ 31/03-1/22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր կողմից կայացված 30.03.2022թ-ի թիվ 6 արձանագրությամբ նշված է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի համապատասխան ստորաբաժանման մասնագետների մասնագիտական գիտելիքներն ու փորձը հնարավորություն չեն տվել ուսումնասիրել և ստուգել Ընկերության կողմից «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված առանցքակալների տեխնիկական բնութագրերը ե Ընկերությանը տրամադրվել է մեկ աշխատաքային օր, որպեսզի իրականացվի տեխնիկական բնութագրերի շտկում առանց հստակեցնելու, վերացական կերպով նշելուվ անհամապատասխան է հրավերի պահանջներին, ինչը հակասում է Կառավարության որոշմանը …

Նման արձանագրությունից դժվար է կռահել թե 6, 12, 15, 18 և 19 չափաբաժիններում ներկայացված առանցքակալների տեխնիկական բնութագրերում ինչն է անհրաժեշտ փոփոխվի կամ շտկվի …

Միևնույն ժամանակ ոչ բավարար գիտելիքներով մասնագետների կողմից կայացված վերացական որոշումները անընդունելի են …

Հարգելի Մ. Մանավջյան տրամադրեք մասնագիտորեն՝ հրավորով պահանջվող և առաջարկվող տեխնիկական բնութագրերով, առանցքակալների անհամապատասխանությունները՝ տարբերությունները, որպեսզի գործարանի մասնագետները կարողանան բավարարել պահանջները …»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2022թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել շտկված

տեխնիկական բնութագրերը և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: <u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը</u>***:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Կարգի 41-րդ և 43-րդ կետերով սահմանված իմպերատիվ պահանջները, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի որոշմամբ հաստատված Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջները, այն է՝ ***<u>մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները</u>***, այսինքն՝ արձանագրելով անհամապատասխանություններ, թե՛ արձանագրության, թե՛ Ընկերությանն ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն չեն նկարագրվել Հավելված 1.1-ով ներկայացված թիվ 6, 11, 12, 15, 18 և 19 չափաբաժինների մասով հայտնաբերված անհամապատասխանությունները (անհամապատասխանությունների բնույթը), որպիսի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, Ընկերությունը զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունից:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի

կարող վրա հասնել և հանգեցնել «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.04.2022թ. թիվ 26/26-1/6413-2022 գրությամբ «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**